

ԱՄԱՆՕՐԻ ԽՈՍՏՈՒՄԸ

«Եվ այս բանի համար ամեն ջանք թափելով ձեր հավատով ներկայացրե՛ք առաքինությունը և առաքինությամբ՝ գիտությունը, և գիտությամբ՝ ժուժկալությունը, և ժուժկալությամբ՝ համբերությունը, և համբերությամբ՝ աստվածապաշտությունը, և աստվածապաշտությամբ՝ եղբայրությունը, և եղբայրությամբ՝ սերը: Որովհետև այս բաները, ձեր մեջ մնալով ու աճելով, ձեզ դատարկ ու անպտուղ չեն անի մեր Տեր Հիսուս Քրիստոսի գիտության մեջ:» 2 Պետ 1:5-8

«Հավատարիմ է Աստված...» Ա Կորնթացիս 1:9

Աստված խոստանում է...

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս սարին կասեք՝ այստեղից այնտե՛ղ փոխադրվիր, ու նա կփոխադրվի, և ձեզ համար անկարելի ոչինչ չի լինի:» Մատթեոս 17:20

Ա- Մտածիր մեծ

«...ոչինչ ձեզ համար անկարելի չի լինի:»

«Բայց նրան ով կարող է առատությամբ ամեն բանից ավելին անել, քան որ խնդրում ենք ու իմանում, այն գործության չափով, որ մեր մեջ ներգործում է:»

Եփեսացիս 3:20

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ինձ հավատացողն այն գործերն էլ կանի, որ ես եմ անում, և դրանցից էլ ավելի մեծ բաներ կկատարի, որովհետև ես իմ Հոր մոտ եմ գնում:» Հովհաննես 14:12

«Քիչ բաների վրա հավատարիմ էիր, ես քեզ շատ բաների վրա կդնեմ...» Մատթեոս 25:23

Բ- Սկսիր փոքր

«Եթե մանանախի հատիկի չափ հավատ ունենաք...»

1. Լսիր թե Աստված ի՞նչ ունի ասելու

«Թող լսեմ թե ինչ կխոսի Տեր Աստվածը...» Սաղմոս 85:8

«Խոհեմ սիրտը գիտություն կորոնի, բայց հիմարների բերանը հիմարությունով է սնանում:» Առակաց 15:14

2. Ասա Աստծուն, թե ինչի կարիք ունես

«Ոչինչ հոգ մի արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն:» Փիլիպպեցիս 4:6

«Ցանկանում եք բայց չունեք, որովհետև չեք խնդրում:» Հակոբոս 4:2

«Բայց ես աղոթք եմ անում քեզ, ով Տեր, ընդունելի ժամանակում. ով Աստված, քո առատ ողորմության համար լսիր ինձ քո փրկության ճշմարտությունովը:» Սաղմոս 69:13

3. Ծնորհակալությունդ հայտնիդ Աստծուն

«Ո՛վ Աստծու մեծության, իմաստության և գիտության խորություն, ի՛նչ անքննելի են նրա դատաստանները, և անհասկանալի են նրա ճանապարհները:» Հոով 11:33

«Եվ քաղցր է լույսը և ախորժելի է աչքին տեսնել լույսը:» Ժողովող 11:7

«Որովհետև որքան Աստծու խոստումները որ կան, Քրիստոսի մեջ է «այո»-ն:» Բ Կորնթացիս 1:20

«Պինդ, անսայթաք բռնենք հույսի դավանությունը, որովհետև խոստացողը հավատարիմ է:» Եբրայեցիս 10:23